

ԱՄՓՈՓ ՁԵԿՈՅՑ ՄԱՅՐ ԱԹՈՒ Ս. ԷԶՄԻԱԾԻՆԻ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԵԱՆ

(Յունուար-Օգոստոս 1998)

Ներկայացուած Գերագոյն Հոգևոր Խորհրդի նիստին,
24-26 Օգոստոս 1998

Սիրելի Հոգևոր եղբայրներ,

Յարգարժան աշխարհական ժողովականներ,

Բոլորդ ալ լաւ կ'ըմբռնէք որ այս ամբաս Մեր տեղեկագիրը քիչ մը տարբեր մկարագիր և տարողութիւն ունի: Որովհետև անցնող 8 ամիսներու առաջին 4-ի ընթացքին Մենք Մայր Աթոռի մէջ ղեկավարեցինք ընդհանուր գործունէութիւնը: Մնացեալ չորս ամիսները առողջական պատճառներով հարկադրուեցանք բացակայիլ Մայր Աթոռէն և հեռուէն հետևիլ և որոշ ուղղութիւններ տալ Մեր կողմէ նշանակուած Վանական Խորհրդոյին (Յուսիկ Արքեպս. Սանթուրեան, Ներսէս Արքեպս. Պոգապալեան, Գարեգին Արքեպս. Ներսէսեան, Հայկազուն Ծ. Վրդ. Նաճարեան, Միքայէլ Ծ. Վրդ. Աջապահեան, Արտակ արեղայ Տիգրանեան, պրն. Գևորգ Կեոկչեան), որուն կը յայտնենք Մեր խոր շնորհակալութիւնները:

Արդարև, Ապրիլի 14-ին, Զատիկի տօնէն երկու օր ետք, բժիշկներու կտրուկ յանձնարարութեամբ, մեկնեցանք Լոնտոն բժշկական քննութեան համար՝ մեր բերանին մէջ յառաջ եկած փոքրիկ ուռուցքի մը պատճառաւ: Լոնտոնի մէջ ի յայտ եկաւ որ եղած վերքը կը կարօտէր ամփոջական և անյետաձգելի դարմանումի: Թեւ խորհրդակցութեան՝ յարմար դատուեցաւ որ Նիւ Եորքի մէջ տեղի ունենայ երկրորդ քննութիւն մը և, ի հարկին, այնտեղ կատարուի դարմանումը, որ երկու-երեք ամիսներու վրայ տարածուելիք բժշկական գործառնութեան ընթացք մըն էր: Ուստի, Լոնտոնէն անցանք Նիւ Եորք և այնտեղ յետ ստուգման դարմանումը սկսաւ շողարձակումներու (radio-therapy) եղանակաւ որ տեւեք երեք-չորս ամիսներ: Փառք Աստուծոյ՝ դարմանումը լաւ արդիւնք է տուած և ահա երկու օրերէ ի վեր վերադարձած եմ Մայր Աթոռ և վերսկսած իմ պարտաւորութիւններուն:

Արդէն իսկ հայ մամուլի միջոցաւ Գոհաբանական և Շնորհակալական Գիր մը ուղղեցինք բոլոր անոնց, որոնք հեռաձայնային խօսակցութիւններով, նամակներով, հեռագիրներով, ծաղկեփունջերով իրենց քարեմալութիւնները յայտնեցին, և շատեր լուռ աղօթք մատուցին առ Աստուած Մեր առողջութեան համար: Զեզի ևս, որպէս Գերագոյն Հոգևոր Խորհրդի անդամներ, կը ներկայացնենք Մեր շնորհակալութիւնները:

Մեր երկիրն ալ այս շրջանին, յատկապէս Փետրուարի 4-էն ասդին անցաւ եղաշրջման ընթացքի մը մէջէն, երբ մախազահ Մեծլ. Լեւոն Տէր Պետրոսեան հրաժարեցաւ մախազահութեան իր պաշտօնէն և 40 օրեր յետոյ, Մարտի 30-ին, մոր մախազահ ըմտրուեցաւ Վարչապետ Ռոպէրթ Քոչարեան: Փետրուարի 11-ին, Վարչապետ Ռոպէրթ Քոչարեան, որ ստանձնած էր մասն ժամանակատրապէս մախազահի պարտականութիւնները, մինչև մոր մախազահի ըմտրութիւնը, այցելեց Մեզի ի Մայր Աթոռ, ուր խորհրդակցութիւններ ունեցանք այս անցման շրջանին մասին: Մենք Մեր հայրապետական պարտքը կատարեցինք՝ մոր Նախագահի եղբման արարողութեան, ուր օրհնութեան աղօթք արտասանեցինք և հայրական խօսք ուղղեցինք խորհրդարանի մասնաւոր միստին, որ տեղի ունեցաւ Օփերայի շէնքին մէջ. ի ներկայութեան հրաւիրեալ հասարակութեան:

Փառք Աստուծոյ՝ այս քոյրը և առնչակից այլ փոփոխութիւններ տեղի ունեցան խաղաղ, օրինական պայմաններու տակ, քաղաքացիական առողջ մթնոլորտի մէջ, որուն ջատագովը և զմահատողը հանդիսացանք Մեր հրապարակային խօսքերով:

Անցնինք գործունէութեան այլագան բնագաւառներուն. —

Ա

ՄԻԱԲԱՆՈՒԹԻՒՆ

Միաբանական կեանքը լընդհանուրս անցաւ սովորական ընթացքով: Մենք է որ վերջին չորս ամիսներուն զրկուած մնացինք Միաբանութեան հետ ժամերգութիւնները վայելելէ և հաւաքոյթներ ունենալէ Մեր քառամսեայ բացակայութեան հետեանքով:

Ուրախութիւն է Մեզ համար այստեղ յիշատակել որ Մեր Միաբանութեան երիտասարդ անդամներէն չորսը ուղարկեցինք արտասահման բարձրագոյն ուսման նպատակով՝

ա) Բագրատ Արդ. Գալստեան, «Էջմիածին» ամսագրի խմբագիրը, Յուլիսին մեկնեցաւ Անգլիա, ուր անգլերէն լեզուի երկամսեայ դասընթացքներու հետեւելէ ետք պիտի ընդունուի Մըրֆիլտի Աստուածաբանական Համալսարանական Գոլէճը՝ աստուածաբանութեան դասընթացքներուն հետեւելու համար, որպէս կանոնաւոր ուսանող:

բ) Կարապետ Արդ. Յարութիւնեան, Օգոստոսի սկիզբը մեկնեցաւ Լիոն (Ֆրանսա), ուր դարձեալ ֆրանսերէն լեզուի հմտանալէ ետք, Լիոնի կաթօլիկ համալսարանի մէջ պիտի հետեւի աստուածաբանական դասընթացքներուն:

գ) Անուշաւան Արդ. Ժամկոչեան, մօտ ատենէն կը մեկնի Գերմանիա, Հալլէ-Ուիթթենպերկ համալսարանի մէջ հետեւելու համար երաժշտագիտական ուսման:

դ) Ցարութիւն Սրկ. Ցարութիւնեան, Օգոստոսի վերջին կը մեկնի Զուիցերիա, ուր Եկեղեցիներու Համաշխահային Խորհուրդի առնչուած Պոսսէի Էկումենական Ինստիտուտի մէջ պիտի հետեւի տարեկան յատուկ դասընթացքի Էկումենական միութեան շուրջ:

Հայաստանի Հանրապետութեան Պաշտպանութեան մախարարին հետ խորհրդակցելէ ետք, որոշեցինք որ Գէորգեան Հոգևոր Ընտարանի աւարտական սաներէն ոմանք երթան քանակ՝ հոգևոր ծառայութեան առաքելութեամբ, որպէս օգնականներ քանակի Հոգևոր Խորհրդատու (չմշթիջկ) հայր Վրթանէս վրդ. Աբրահամեանին:

Յաւի սրտի, կ'ուզէի արձանագորել այստեղ, որ Մեր քացակայութեան Մեր Միաբանութեան անդամներէն Արմավիրի Թեմի Առաջնորդ՝ Գերշ. Տ. Ասողիկ Եպիսկոպոս Արիստակէսեան, ուրիշ աշխարհական անձերու հետ միասին, քանակի գանձանակէն դուրս բերուած գումարի իւրացման ամբաստանութեամբ քանտ էր դրուած: Մեր ժամանումէն ասդին, երկու օրերու ընթացքին կարելիութիւնը չունեցանք զբաղելու այս հարցով: Բնականօրէն պիտի զբաղիմք յառաջիկայ օրերուն: Եղած ամբաստանութիւնը կապ չունի Հայ Եկեղեցւոյ հետ: Քաղաքացիական օրէնքներու համաձայն քննարկման է ենթարկուած: Երբ քննութեան արդիւնքները քացայայտուին, ըստ այնմ կը տնօրինենք պարտն ու պատշաճը յետ խորհրդակցութեան Գերագոյն Հոգևոր Խորհուրդի Հայաստանի մէջ եղող անդամներուն հետ:

Այս զխակարգումի տակ կ'ուզենք յիշատակել Միաբաններու և Հայաստանի Թեմերուն մէջ գործող քահանաներու տարեկան միօրեայ հաւաքը, շուրջ 120 հոգևորականներու մասնակցութեամբ, որ տեղի ունեցաւ Մարտի 20-ին Մայր Աթոռ Ս. Էջմիածնի մէջ:

Բ

ԳԵՈՐԳԵԱՆ ՀՈԳԵԻՈՐ ՃԵՄԱՐԱՆ

Շուրջ ութսուն տարիներ Գէորգեան Ընտարանի պատմական շէնքը չէր ծառայեր իր սկզբնատիպ նպատակին: Պետութեան կողմէ այժմ Մայր Աթոռին վերադարձուած ըլլալով և անցնող Սեպտեմբերին վերանորոգեալ շէնքին (քարերարութեամբ Տէր և Տիկին Գէորգ և Սիրվարդ Յովնանեաններու) բացումը կատարելէ ետք, առաջին տարին էր այս տարի, որ Հոգևոր Ընտարանի բոլոր դասաւանդութիւնները և գիտական, ուսումնական ձեռնարկներն ու աշխատանքները տեղի ունեցան այստեղ:

Ուսանողութեան թիւը դպրոցական տարեշրջանի սկիզբին 109 էր, աւարտին՝ 104: Այս տարի հունձքը առատ էր, քաղդատած մախորդ տարիներուն: Գէորգեան Հոգևոր Ընտարանը ունեցաւ 18 շրջանաւարտներ, որոնք այժմ կը պատրաստուին՝ իրենց աւարտաճառերը գրելով ընդ հսկողութեամբ Միքայէլ Ծ. Վրդ. Աջապահեանի:

Դասաւանդութեանց կողքին ժեմարանի մէջ եղան քազմաթիւ մշակութային ձեռնարկներ, դասախօսութիւններ, այցելութիւններ, ցուցահանդէսներ, որոնց մասին մանրամասնօրէն տեղեկատուութիւն տրուած է Տեսուչի՝ Է. Հայկազուն Մ. Վրդ. Նաճարեանի տեղեկագրին մէջ: Յիշատակելի են 9 ուսանողներու տասնօրեայ այցը ի Տանիմարջա և այլ այցելութիւններ Հայաստանի թեմերը, ինչպէս Սիւնեաց և Կոտայքի և այնտեղ ամոնց մատուցած ծառայութիւնները որոնք այնքան կենսական են փորձառութիւն ձեռք բերելու տեսակետէն:

Կարևորագոյն կարիքներէն մէկն է կրօնական, Ս. Գրական, Աստուածաբանական ճիւղերու դասաւանդման ուժեղացումը: Հարկ է դուրսէն հրաւիրել միաբաններ, ուրիշ դասախօսներ: Նիւթական միջոցները սակայն ժլատ են: Ամհրաժեշտ է զարկ տալ Մմայում Հիմնադրամին (Endowment Fund for Kevorkian Theological Seminary): Տեսուչի տեղեկագրին մէջ յիշուած այս հիմնական կարիքին համար կարելի է թելադրել որ որոշ անհատներ ստանձնեն մէկ տարուան դասաւանդութիւնը (yearly lectureship), որուն տարեկան ծախսը կը գնահատուի 10 հազար տոլար, ներառեալ դասախօսի երթևեկութիւնը:

Գ

Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան Կեդրոնի սովորական գործունէութեան զխաւոր կէտերը վարիչ-տնօրէն Հայր Վազգէն Վրդ. Միրզախանեանի տեղեկագրէն քաղելէ առաջ պարտք կը զգամ յիշատակել այն բացառիկ յաջողութիւն արձանագրած ձեռնարկները, որոնք տեղի ունեցան Երևանի «Արամ Նաչատուրեան» ընդարձակ համերգասրահին մէջ սերտ գործակցութեամբը Մայր Աթոռոյ և պետական Մշակութային Նախարարութեան: Այսպէս, Յունուար 3-էն 13, տասը օրեր շարունակ, հայ դպրոցական մանուկներու համար օրական երկու հանդիսութիւններ կազմակերպուեցան Ս. Ծննդեան տօնին առնչութեամբ և բոլոր ներկայ ուսանողներուն փոքրիկ ճուղներ բաժնուեցան: Աւելի քան 25.000 երեխաներ ներկայ գտնուեցան: Թայտագրին իր մասնակցութիւնը բերաւ Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան կեդրոնը: Մայր Աթոռը նիւթական միջոցները հայթայթեց Հէրըլտ և Մոզէֆին Կիւլամէրեան հիմնադրամի եկամուտէն: Ուրախութիւն սփռող օրեր հայ մանուկներու կեանքին մէջ...:

Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզչութեան կեդրոնը 22 անձերէ բաղկացած մմայում պաշտօնէութեամբ շարունակեց և ճոյնիսկ ընդարձակեց իր գործունէութիւնը հետևեալ մարզերու մէջ. -

ա) Կրօնի ուսուցիչներու պատրաստութիւն. 1995 թուականէն առդին Երևանի, Արտաշատի, Մասիսի, Ապարանի և Արմավիրի մէջ գործող դասընթացքներուն վրայ աւելցան վաճաճորի (Գուգարաց Թեմ),

Հրագրամի և Արովեանի (Կոտայքի թեմ), Եղեգնաձորի (Սիմեոնաց թեմ) և Աշտարակի (Արագածոտնի թեմ) կեդրոնները, ուր կանոնաւոր կերպով տեղի ունեցան ուսուցչաց պատրաստութեան դասընթացքները, ամէն շաբաթ երեք ժամերու դասաւանդութիւններով, երկու տարուան ժամանակի վրայ տարածուած:

Կազմակերպուեցան միօրեայ սեմինարներ, ուխտագնացութիւններ ի Ս. Էջմիածին և Հայաստանի այլ սրբավայրեր:

բ) Բացառիկ կարևորութիւն ունէր Օգոստոսի 10-22ի շրջանին Արցախի մէջ (Ստեփանակերտ) կազմակերպուած կրօնի ուսուցչաց պատրաստման ուսումնական երկշաբաթեայ դասընթացքը՝ շուրջ 100 ուսուցիչներու և ուսուցչուհիներու մասնակցութեամբ: Ուսուցման առարկաներն էին.՝ Ս. Գրոց մեկնաբանութիւն, Հայ Եկեղեցւոյ պատմութիւն, քրիստոնէական դաստիարակութիւն, ծէսեր ու տօներ և եկեղեցական երաժշտութիւն (շարականներ): Բոլոր ուսուցիչներուն հայթայթուեցան 1-10-րդ դասարաններու դասագրքերը և իրաքանչիւրին 22 կտոր գրքեր որպէս կրօնական օժանդակ գրականութիւն:

Դասագրքերը այժմ վերատպագրութեան են յանձնուած Ղարաբաղի բոլոր դպրոցներու աշակերտութեան համար:

Մենք հովանաւորեցինք այս գործը՝ միջակայ բոլոր միջոցները հայթայթելով, քարերարներու միջոցաւ: Արցախի պետութիւնը իր լայն քաջալերութիւնը ցոյց տուաւ այս կենսական գործին:

գ) Առաջին անգամ ըլլալով պատրաստուեցաւ կրօնական դասաւանդութեան տասնամեայ ծրագիրը և առանձին գիրքով հրատարակուեցաւ:

դ) Հրատարակչական մարզին մէջ լայն գործունէութիւն ծաւալուեցաւ 8 ամիսներու ընթացքին: Սոյն տեղեկագրին մէջ տպարանին յատկացուած բաժնին մէջ գրուած են կարգ մը մանրամասնութիւններ:

ե) Իսկ լսողա-տեսային մարզին մէջ կանոնաւոր կերպով շարունակուեցան հեռուստատեսիի ծրագրերը՝ "Խորան լուսոյ", "Առաւօտ լուսոյ" և "Սիրեցեք զմիմեանս":

"Քրիստոնէայ Հայաստան" կիսամսեայ տեղեկատուական և կրօնական դաստիարակութեան նուիրուած հրատարակութիւնն ալ շարունակուեցաւ Քրիստոնէական Դաստիարակութեան բաժանմունքին միջոցաւ:

Գ

ՏՊԱՐԱՆ

Տպարանը, ինչպէս անցեալ երկու-երեք տարիներուն, այս ութամսեայ շրջանին ևս ծաւալեց բազմադիրին գործունէութիւն հրատարակչական մարզին մէջ: Այս վերջին ամիսներուն, բացի "Էջմիածին" պաշտօնական ամսագրէն, "Քրիստոնէայ Հայաստան" կրօնական երկշաբաթաթերթն ևս սկսաւ տպուիլ մեր տպարանին մէջ:

Քրիստոնէական Դաստիարակութեան և Քարոզութեան կեդրոնի

բոլոր հրատարակությունները Մայր Աթոռոյն տպարանէն լոյս տեսան։ Զրիստոնէական ուսման յատուկ դասագրքերը (շուրջ տասը հատոր), մեր եկեղեցւոյ հայրերէն ուսման գործերուն թարգմանութիւնը (ինչպէս Ստեփանոս Սիմեցիի, Եփրեմ Ասորիի, Խոսրովիկ Թարգմանիչի, Ադ. Զուլայեցիի, Յակոբ Սրճեցիի, Յովնան Ոսկեբերանի, Զաքարիա Ձագեցիի, Գրիգոր Տաթևացիի և այլոց գրությունները), կրօնական դաստիարակութեան ուղեցոյց գրքոյկը մեր տպարանի արտադրություններն են։ Նաև Մեր Միաբան հայրերու գործերը, հայ գրագէտներու, պատմագէտներու, բանասէրներու աշխատասիրությունները, անոնց մէջ յիշատակելի են Կարէն Մաթևոսեանի «Ամիի եկեղեցական կեանքը և ձեռագրական ժառանգությունը», Պիոն Յակոբեանի խմբագրութեամբ Գալուստ Տէր Մկրտչեանի «Հայագիտական Ուսումնասիրություններ» ժողովածուն, Պոլսահայ գրագէտ Ռ. Հատտէճեանի երկերու Հատընտիր ժողովածուն, Գրիգոր Բրուտեանի «Ամանիա Ոիրակացու Խառնախորանը», Մեր գրած «Խաչի Ճանապարհ»ի հայերէն թարգմանութիւնը իտալերէնէ (Հ. Միքայէլ Ծ. Վրդի կողմէ) որ կարդացուած էր Մարտի 28-ին Հռոմէական Կաթոլիկ եկեղեցւոյ պետին՝ Յովհաննէս-Պօղոս Բ. Պապին կողմէ, Հռոմի coliseum-ին շուրջ 14 հանգրուաններով թափորով և աղօթքներու մատուցմամբ շրջագայելու ընթացքին, նաև լոյս տեսան Մեր «Հայրապետական խօսքերն» ու քարոզները, պատգամներն ու կոնդակները Մայր Աթոռի տպարանէն։

Նոր թափ տրուեցաւ նաև կրօնական դասագրքերու վերահրատարակութեան՝ դպրոցական կրթութեան համար, յատկապէս Ղարաբաղի մէջ, ինչպէս վերև յիշուեցաւ։

Ե

ՀՈՎՈՒՍԿԱՆ ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ութը ամիսներու ընթացքին հովուական այցելութիւն տրուեցաւ հետևեալ թեմերուն—

1. Ներքին թեմեր (Հայաստան և Արցախ)

Մեծ պահքի շրջանին, Մարտ ամսին, հոգևոր քարոզութեան և վերարթնութեան նպատակով միօրեայ այցելութիւններ տուինք Արագածոտնի (Ապարան), Կոտայքի (Հրազդան), Գեղարքունեաց (Կամօ), Այրարատեան (Երևանի Ս. Սարգիս), Արմավիրի (Բամբակաշատ) թեմերուն, ընկերակցութեամբ թեմակալ Առաջնորդներուն և միաբան հայրերու։ Տեղի ունեցան Մեծ Պահոց յատուկ եկեղեցական ժամերգություններ, որոնց ընթացքին տուինք քարոզներ։ Այդ առիթով նաև ցրուեցաւ ժողովուրդին մէջ «Խոհեր և Յորդորներ Մեծ Պահոց Շրջանի» խորագրին տակ Մեր հրատարակած գրքոյկը։

Փետրուար 20-ին, դարձեալ միօրեայ այցելութեամբ, գացինք Արցախ՝ Արցախեան ազատագրական շարժումի 10-ամեակի տօնակատարութեանց նախագահելու համար: Ղարաբաղի նախագահի՝ Մեծյ. Արկադի Ղուկասեանի, Թեմակալ Առաջնորդ Արքազանի՝ Պարզ Եպս. Մարտիրոսեանի և այլ պետական բարձրաստիճան անձնաւորութեանց հետ միասին ներկայ գտնուեցանք Ազգային Ժողովի (խորհրդարանի) նիստին, թատրոնի սրահին մէջ Մեր խօսքը ուղղեցինք հրաւիրեալ հասարակութեան, Մեր պատգամը տուինք Ստեփանակերտի վերածննդեան հրապարակի վրայ համախմբուած բազմաթիւ ժողովուրդին, ծաղկեպսակ գետեղեցիք Զոհուած Ազատամարտիկներու Յուշահամալիրին, ապա այցելեցինք Օուշիի վերանորոգեալ եկեղեցին:

Ներքին թեմերու եկեղեցական գործունէութեան զօրացման նպատակով 27 փետրուարին Մայր Աթոռոյ մէջ գումարեցինք միօրեայ ժողով, Հայաստանի և Արցախի Առաջնորդներու մասնակցութեամբ, ուր լայնօրէն քննարկուեցան թեմերու համայնքային կազմակերպման, ծխատէր քահանայ հայրերու թիւի պակասի, քրիստոնէական դաստիարակութեան տեղական գրասենեակներուն օժանդակելու հարցերը: Բոլոր Առաջնորդները յաջողող երկու ամիսներու ընթացքին Մեզի ներկայացուցին վանքամասն տեղեկագիրներ, որոնց լոյսին տակ դարձեալ ժողովական խորհրդակցութեամբ պիտի նախաձեռնուին կազմակերպական և կրթադաստիարակական աշխատանքներ:

2. Արտասահմանեան թեմեր.-

ա) Եգիպտոսի թեմ. Յունուար 14-24ի ժամանակամիջոցին Մեր առաջին հովուապետական այցելութիւնը տուինք Եգիպտոսի պատմական թեմին, հրաւիրովը թեմակալ Առաջնորդ Տ. Զաւէն Արքեպս. Չինչինեանի: Այցելութիւնը երեք տարածքներ զգեցաւ.

- Ազգային-եկեղեցական, որու ընթացքին գտնուեցանք մեր հայկական եկեղեցիներուն մէջ ի Գահիրէ և յԱղեքսանդրիա, քարոզելով ժողովուրդին, մեր ազգային վարժարաններու աշակերտութեան հետ, հանդիպումներ և զրոյց ունենալով ազգային եկեղեցական ժողովականութեան և այլ համայնքային կազմակերպութեանց ներկայացուցիչներու հետ յատուկ ճաշկերութիւններով, թէ՛ Գահիրէի և թէ՛ Աղեքսանդրիոյ մէջ, մամուլի ներկայացուցիչներու հետ Ազգային Առաջնորդարանի մէջ, "Այծեմնիկ" ծերանոցին մէջ, մշակութային սրահներու մէջ դասախօսութիւններ տալով:

- Միջ-եկեղեցական (էկիւմենական) հանդիպումներ քոյր դաւանակից Ղպտի Օրթոտոքս եկեղեցւոյ պետին՝ Շնուտա Գ. Պատրիարքին և Սինոտի անդամներուն հետ թէ՛ Ղպտիներու Պատրիարքարանի ու Ս. Մարկոս Մայր Տաճարի և թէ՛ Գահիրէի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Առաջնորդանիստ եկեղեցւոյ և Ազգային Առաջնորդարանի մէջ: Այստեղ

ստորագրուեցաւ միասնական յայտարարութիւն մը. առաջինը իր տեսակին մէջ, եղբայրական գործակցութեան ճամբաներ քացող ապագայի համար: Հանդիպումներ Աղեքսանդրիոյ Յոյն օրթոտոքս մորքմտիք Պատրիարք Պետրոս Ա-ի և Յոյն Կաթողիկ Եկեղեցւոյ պետ՝ Մաքսիմուս Ե. Հաքիմ Պատրիարքին հետ:

- Պետական յարաբերութիւններ, որոնց ընթացքին Մենք առիթներ ունեցանք հանդիպումներ ունենալու Եգիպտոսի Նախագահ Մոհամմէտ Հիսմի Մուպարաքին, Արտաքին գործոց նախարար Ամր Մուսայի հետ, քննարկեցին խօսքի որպէս առանցք ունենալով Հայաստանի և Եգիպտոսի յարաբերութեանց զարգացման ընթացքը և Միջին Արևելքի ընդհանուր կացութիւնը:

Յարաբերութեանց այս ծիրէն ներս կարևոր դէպք եղան Մեր այցելութիւնը ողջ աշխարհի մէջ Իսլամական կրօնքի մեծագոյն համալսարանը նկատուող Ալ-Ազհարի կեդրոնը և Մեր խօսակցութիւնները ընդհանուր տնօրէն Շէյխ Թամթաուի և իր անմիջական օգնականներուն հետ:

Կարևոր դրուագ մը եղաւ նաև Հայաստանի Հանրապետութեան յարգարժան դեսպան Տիար Եղուարդ Նալբանդեանի կողմէ (որ Մեր կողքին եղաւ Թեմակալ Առաջնորդ Զաւէն Արքեպս. Զինչիմեանի հետ բոլոր պաշտօնական ձեռնարկներուն) դեսպանատան մէջ տուած ճաշկերոյթը, որուն ներկայ եղան Ալ Ազհարի չորս ղեկավար իսլամ Շէյխեր, բոլոր քրիստոնեայ Պատրիարքները և Արտաքին Գործոց Նախարարութեան ներկայացուցիչներ:

Մենք զգացինք որ այս տասնօրեայ այցելութիւնը վերագարթօցնքի գեղեցիկ առիթ եղաւ Եգիպտոսի մեր սիրեցեալ և հաւատացեալ ժողովուրդին համար:

բ) Գերմանիոյ թեմ. (24 Յունուար-4 Փետրուար). Եգիպտոսէն ուղղակի մեկնեցանք Գերմանիա, մորակազմ թեմին տալու Մեր անդրանիկ այցելութիւնը, հրաւերովը Առաջնորդ Տ. Գարեգին Եպս. Պէքճեանի:

Մեր այցելութեան առաջին հանգրուանը եղաւ Առաջնորդանիստ Քէօլմ քաղաքը, ուր մոյմ օրը՝ շաբաթ Ս. Սահակ-Ս. Մեսրոպ եկեղեցիին օծման արարողութեան սկսանք դռնբացելով յաջորդ օր մատուցուած պՊատարագին զայն օծելու համար: Հոգևոր վերաթմութեան սքանչելի առիթ մը եղաւ այդ օծումը:

Տասնօրեայ այցելութեան ընթացքին եղանք Պոնն մայրաքաղաք, Համպուրգ, Պերլին, Փոցտամ, Ոթութարդ, Գէօփինկէն, Ֆրանքֆուրտ քաղաքները, հանդիպեցանք հայ ժողովուրդի զաւակներուն, աղօթելով անոնց հետ, քարոզելով, դասախօսութիւններ տալով, յատկապէս երիտասարդ սերունդին:

Հայոց Թեմի և հայկական շրջանակներէն դուրս, հանդիպումներ

ունեցանք երկրի եկեղեցական և քաղաքական-պետական բարձրագույն իշխանությունաց ներկայացուցիչներուն հետ. այսպես՝ Քեօլմի մէջ կարտի-նալ Ե. Մայզների, Կաթողիկ եկեղեցւոյ Եպիսկոպոսական ընդհանուր ժողովի վարիչ-քարտուղար Քարլ Արքեպս. Լեհմանի և իր անմիջական օգնականներուն հետ, Աւետարանական եկեղեցւոյ Միութեան հետ և ապա երկու մեծ կազմակերպութիւններու՝ "Միսիոնէսվերք" Համպուրգի և "Տիաքոնիսքէս Վերք" Սթուտկարտի մէջ: Այս բոլորի ընթացքին եղան հասարակաց միասնական աղօթքներ, քարոզներ, ճաշկերոյթներ և խօսակցութիւններ Հայ եկեղեցւոյ հետ յարաբերութեանց զարգացման հետանկարով:

Այցելեցինք մաւ Յոյն Օրթոտոքս եկեղեցին և հանդիպում ունեցանք Միտրոպոլիտ Օգոստինոսի հետ:

Պետական-քաղաքական բնագաւառին մէջ հանդիպումներ և առանձնական խօսակցութիւններ ունեցանք Գերմանիոյ Հանրապետութեան վարչապետ Հելմուտ Բոհլի, Խորհրդարանի Նախագահ՝ Տիկին Ռիտա Ջիսմուտի և Արտաքին գործոց Նախարար՝ Քլաուս Բինկլի հետ՝ Պոմմ քաղաքի մէջ: Բնականաբար հանդիպումներ եղան շրջաններու կամ մահանգներու կառավարիչներուն և քաղաքապետներուն և մշակութային միասնաբարութեան ներկայացուցիչներուն հետ, մասնաւորապէս Պերլինի, Փոցտամի և Ֆրանքֆուրտի շրջաններուն մէջ:

Կարևոր դէպքերէն մէկը եղաւ Մեր այցելութիւնը "Հալլէ-Ուիթթեն-պերկ Մարտին Լուտեր" համալսարանը, ուր համալսարանի ղեկավարութիւնը Մեզ մեծարեց "Պատուոյ Տոքթորի" տիտղոսով, այն համալսարանին մէջ, ուր իրենց համալսարանական ուսումը կատարած էին 100 տարիներ առաջ, Կարապետ Եպս. Տէր Մկրտչեանի և Գարեգին Կաթողիկոս Յովսէփեանի մասն մեծ անձնաւորութիւններ Մայր Աթոռ Ս. Էջմիածնէն: Այնտեղ էր որ գիտական դասախօսութիւն մը տուինք "Էկիւմենական շարժումը Հայ եկեղեցւոյ մէջ" միտքով, ուր բնականօրէն ոգեկոչեցինք յիշատակն ու վաստակը Գերմանիոյ մէջ բարձրագոյն ուսման հետևած հայ գիտնական հոգևորականներու:

Փոցտամի մէջ ալ այցելեցինք Յովհաննէս Լեփսիուսի բնակարանը և բացումը կատարեցինք իր անունով կնքուած մէկ փողոցի, բնականօրէն խօսելով հետագային այդ տան մէջ հայ-գերմանական մշակութային յարաբերութիւններու ուսումնասիրութեան մոտիկուած ծրագիրներու մասին:

գ) Միացեալ Նահանգներ-Արևելեան Թեմ. Մայիսի 3-ին հրաւիրուած էինք այցելութիւն տալու Միացեալ Նահանգներու մեր երկու թեմերուն՝ Արևելեան և Արևմտեան, և Գամատայի Թեմին՝ Ամերիկահայոց Թեմի հաստատման 100-ամեակին տօնակատարութեանց միախաղաղելու համար: Բայց Մեր անհանգստութիւնը պատճառ եղաւ որ ջնջենք Մեր

այցելությունը ի Ուաշինգթոն, ի Գալիֆորնիա և ի Գամատա: Միայն Նիւ Եորքի և Պոստոնի շրջաններում մէջ, բժշկական դարմանումի առաջին շաբաթներում, երբ դեռ Մեր առողջական վիճակը թոյլ կու տար, մախազահեցիմք կարգ մը կարևոր ձեռնարկներու: Այսպէս՝

- Էլիս Այլընտի (Նիւ Եորքի մուտքին, ուրկէ գաղթականները ոտք կը դնէին Ամերիկեան Քողին վրայ) ժողովրդական հաւաքոյթին՝ երախտագիտութիւն յայտնելու համար որ մեր ժողովուրդը իր տառապանքի ծանրագոյն օրերում, ԺԹ. դարի վերջերը և Ի. դարու ցեղասպանութենէն ետքը, Ամերիկայի մէջ գտաւ ազատութիւն իր կեանքը վերակառուցելու համար:

- Գոհաբանական պատարագ և քարոզ Ս. Վարդան Մայր Տաճարին մէջ:

- Օքել ճաշկերոյթ Ուալտորֆ Ասթորիա հիւրանոցին մէջ, 9 Մայիսին: Թեմի հաստատման 100-ամեակին առիթով հաստատուեցաւ "Մմայուն Եկամտաբեր հիմնադրամ" մը, (Centennial Endowment Fund), որում համար անհատական մուկրատուութիւններով կարելի եղաւ գոյացնել 5 միլիոն տոլարի գումար մը, որում տարեկան եկամուտը հաւասարապէս պիտի յատկացուի Մայր Աթոռ Ս. Էջմիածնին և Արևելեան Թեմին՝ կրօնական-կրթական դաստիարակչական մատակարարում համար գործածուելու: Օքանջաններով և օրհնութեան գիրերով պատուեցիմք գլխաւոր մուկրատուները Նիւ Եորքի մէջ:

- Հանդիպում ունեցանք մաւ մեր դպրոցական սերունդին հետ՝ Առաջնորդարանի "Գալուքեան" սրահին մէջ:

- Հանդիպումներ եղան Նիւ Եորքի քաղաքապետին՝ Շիւլեանին և ԼՍԱ-ի ընդհանուր քարտուղար՝ Քոֆի Ամանին հետ:

Նիւ Եորքի մէջ Եպիսկոպոսական Եկեղեցւոյ ամենէն աչքառու Աստուածաբանական Համալսարանական Քոլէճներէն մէկը (General Theological Seminary) Մայիսի 5-ին Մեզ պատուեց Մեր գրական-գիտական-աստուածաբանական աշխատութիւններում համար Մեզի շնորհելով "Պատույ Տոքթորայի" աստիճան: Արարողութիւնը և Մեր դասախօսութիւնը տեղի ունեցան Քոլէճի հոչակաւոր մատուոն մէջ:

Պոստոնի շրջանին մէջ եղանք Քէյմպրիճի Ս. Երրորդութիւն եկեղեցիին մէջ, մախազահ Շոն Քէնըտի գրադարանի կեդրոնին մէջ, ուր Մեզի ի պատիւ ընդունելութեան ճաշկերոյթ էր տուած հանգուցեալ մեծանուն մախազահին եղբայրը՝ Էտուըրտ Քէնըտին: Հրաւիրեալներու ընտրանի հասարակութեան մը առջև ջերմ խօսքով հանդես եկաւ Էտուըրտ Քէնըտին, որում Մենք պատասխանեցիմք պատշաճ ճառով մը:

Իսկ Մայիսի 17-ին մեկնեցանք Ուստըր քաղաքը, ուր 1898-ին հաստատուած էր թեմը Խրիմեան Հայրիկի կոնդակով և Տ. Յովսէփ եպս. Արարեանի առաջնորդութեամբ:

Գոհաբանական պատարագ մատուցուեցաւ: Քարոզներով Մեր

խօսքը ուղղեցինք երիտասարդ սերունդին և ընդհանուր հաւատացելոց: Տեղի ունեցաւ մեծ ճաշկերոյթ մասնակցութեամբ շրջանի քաղաքական-պետական ղեմքերու և քաղաքային իշխանութեան ներկայացուցիչներու:

2

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅ ԵԿԵՂԵՑԻՈՅ ՆՈՒԻՐԱՊԵՏԱԿԱՆ ԱԹՈՌՆԵՐՈՒ ՀԵՏ

Անցնող ամիսներուն հիմնական փոփոխութիւններ տեղի չունեցան Մեր յարաբերութեանց մէջ: Բնականոն ընթացան, ինչպէս անցեալ շրջանին:

Մեր անհամապատասխան շրջանին երեք Նուիրապետական Աթոռներու գահակալները յաճախակիօրէն հեռաձայնային խօսակցութեամբ միջտկապ պահեցին Մեզի հետ ի Նիւ Եորք իրենց աղօթքներն ու առողջութեան բարեմաղթութիւնները յայտնելով:

Հայաստանի առաջին Հանրապետութեան (1918-ի Մայիս 28) ութսունամեակին առիթով Մեր Հանրապետութեան նախագահի փափաքով, հրաւիրեցինք Նուիրապետական Աթոռներու պետերը որ ուղարկեն իրենց ներկայացուցիչները մասնակցելու համար մեր Կառավարութեան կողմէ կազմակերպուած տօնակատարութեան: Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութիւնը միայն ուղարկած էր հոգևորականներէ և աշխարհականներէ քաղկացած պատուիրակութիւն մը, որ հիւրը եղաւ Մայր Աթոռոյս:

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութենէն հրաւեր ստացած էինք անձամբ ներկայ գտնուելու "Կիլիկիա" ամսուով շինուած և յարդարուած թանգարանին, որուն կառուցման և դասաւորման աշխատանքներուն կարևոր մէկ մասը տեղի էր ունեցած և միջոցներն ալ ձեռք բերուած էին Մեր անձնական ջանքերով, երբ Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսն էինք: Արամ Ա. Վեհափառ Կաթողիկոսի օրով իր աւարտին էր հասած և որոշուած էր Մարտի 30-ին կատարել պաշտօնական բացումը:

Հայաստանի Հանրապետութեան նախագահական ընտրութեան այդ օրը Մենք չէինք կարող մեկնիլ: Նշանակեցինք Սիւնեաց Թեմի Առաջնորդ՝ Տ. Արքաւհամ եպս. Մկրտչեանը, գաւազանակիր Տ. Արտակ արք. Տիգրանեանը և Կրօնի Գործոց Խորհրդի նախագահ արք. Լ. Սուշեանը՝ ներկայ ըլլալու որպէս ներկայացուցիչներ Մայր Աթոռոյ: Այդ առիթով յատուկ խօսք մը ուղղեցինք, որ բացման հանդիսութեան կարդացուեցաւ:

Օգոստոս 26-ին Արամ Ա. Կաթողիկոս մէկ օրուան համար եկաւ Ս. Էջմիածին՝ անձամբ ներկայացնելու իր մաղթանքները և հետաքրքրուելու Մեր առողջութեամբ: Իրեն կ'ընկերանային Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Ազգային Կեդրոնական Վարչութեան կրօնական և աշխարհական ժողովներու ատենապետները՝ Տ. Արտաւազդ Արքեպս. Թրթռեան և Մեթր Խաչիկ Պապիկեան:

Երուսաղէմի Հայոց Պատրիարքութեան համար, ինչ որ կարելի էր ընել ժառանգաւորաց վարժարանի ուսանողներ գտնելու և ուղարկելու համար, կատարեցինք Մեր սիրոյ և զօրակցութեան պարտքը:

Սրտի ցաւով կ'արձանագրեմք այստեղ, որ Մարտի 6-ին Կ. Պոլսոյ Պատրիարք Տ. Գարեգին Արքեպս. Գազանճեան վախճանեցաւ: Մայր Աթոռի կողմէ պատուիրակութիւն ուղարկեցինք՝ յանձնիւ Եգիպտոսի Հայոց Առաջնորդ Տ. Զաւէն Արքեպս. Զինչիճեանի, Միքայել Ծ. Վրդ. Աջապահեանի և Տ. Արշակ արդ. Խաչատրեանի, Մայր Աթոռոյ սուգն ու վշտակցութիւնը յայտնելու յուղարկաւորութեան և թաղման կարգի ընթացքին՝ յղելով նաև Մեր գրաւոր խօսքը:

Ապա, քառասունքին առիթով և Թուրքիոյ Հայոց Պատրիարքութեան Լիագոր Փոխանորդ Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆեանի հրաւերով, ուղարկեցինք լուսարարապետ Տ. Յուսիկ Արքեպս. Սանթուրեանը: Քառասունքի հոգեհանգստեան արարողութեան մասնակցեցաւ նաև Դիւանապետ Տ. Ներսէս Արքեպս. Պոզապալեանը:

Նոր Պատրիարքի ընտրութեան համար որոշ դժուարութիւններ եմ ստեղծուած և պետական միջամտութիւններ կատարուած: Վերջերս, Օգոստոսի 3-ին, Տեղապահ ընտրուած էր Կրօնական Ժողովի կողմէ Տ. Մեսրոպ Արքեպս. Մութաֆեանը: Նիւ Եորքէն իրեն ուղղեցինք Մեր շնորհաւորութեան Հայրապետական Գիրը: Մեր յոյսն է որ պետական խոչընդոտները կը վերանան և խաղաղ ու հաշտ մթնոլորտի մէջ տեղի կ'ունենայ պատրիարքական ընտրութիւնը:

Է

ՄԻՋ-ԵԿԵՂԵՏԱԿԱՆ ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Բաւական ետուն և արդիւնալից եղաւ նաև Մայր Աթոռոյ գործունէութեան այս մարզը: Կը թուենք գլխաւոր ժողովներն ու հանդիպումները, նոյն ուրուագծային ներկայացման եղանակով. -

1. Յունուար ամսուան, Միացեալ Նահանգներու Ռիչմընտ քաղաքի մէջ (Վերճիմիա նահանգ) տեղի ունեցաւ Արևելեան քոյր դաւանակից (ոչ Քաղկեդոնական) Եկեղեցիներու և Բողոքական Բարեկարգեալ Եկեղեցիներու միջև նրկխօսութեան ժողովը հիւրընկալութեամբ Փրեսպիթերեան Եկեղեցւոյ Հոգևոր Շեմարանին: Մայր Աթոռոյ կողմէ մասնակցեցաւ Տ. Վիգէն Եպիսկոպոս Ալքազեան:

2. Իտալիոյ մէջ Սան Իճիդիօ ծանօթ Միաքանութեան և Լորեթօ քաղաքի կաթոլիկ Արքեպս. Տ. Անջելօ Քոմաստրիի հրաւերով Գեորգեան Շեմարանի դասախօսներէն Տ. Տաթև Արքեպս. Սարգիսեան մեկնեցաւ Իտալիա, Քրիստոնէական Միութեան Աղօթքի Եարաթի առիթով (8-25 Յունուար) և ալլազան տեղեր՝ եկեղեցիներու, ընկերային ծառայութեանց հաստատութիւններու մէջ տուաւ քարոզներ և դասախօսութիւններ ու գրոյցներ Հայ Եկեղեցւոյ մասին:

3. Փետրուար 21-ին Մենք այստեղ, Ս. Էջմիածնի մէջ ընդունեցանք Կ.

Պոլսոյ Տիեզերական Պատրիարքութեան ներկայացուցիչ Միտրոպոլիտ Դամասկոնոսի և Ղպտի Օրթոտոքս Եկեղեցւոյ Սինոդի ընդհանուր քարտուղար՝ Միտրոպոլիտ Պիշոյի այցելութիւնը: Եկած էին Արեւելեան Քաղկեդոնական և ո՛չ-Քաղկեդոնական Եկեղեցիներու երկու ընտանիքներու միմէն այժմ Քրիստոսաբանութեան շուրջ տարուած կիսապաշտօնական խօսակցութիւններու եզրակացութիւնները պաշտօնապէս Մեզի ներկայացնելու համար:

4. Մայիսի 8-ին Դամասկոսի մէջ (Սուրիա) տեղի ունեցաւ Օրթոտոքս Եկեղեցիներու ներկայացուցիչներու խորհրդակցական ժողով մը: Եկեղեցիներու Համաշխարհային խորհուրդի (World Council of Churchs) Զինպապուէի մէջ յառաջիկայ Դեկտեմբերին գումարուելիք ընդհանուր ժողովին նշանակեալ անդամներու հաւաք մըն էր այս, քննարկելու համար Օրթոտոքս Եկեղեցիներու առջև դրուած որոշ դժուարին հարցեր, որոնց համար Քաղկեդոնական Եկեղեցիներու մասն հաւաքոյթ մը տեղի ունեցած էր արդէն Սալոնիկի մէջ (Յունաստան) և վերապահութիւններ յայտնուած էին Օրթոտոքս Եկեղեցիներու մոլմիսկ մասնակցութեան և այդ մասնակցութեան պայմաններու և ձևերու մասին: Դամասկոսի խորհրդակցական ժողովը, աւելի չափաւոր եզրակացութիւններու յանգեցաւ: Մայր Աթոռին կողմէ մասնակցեցան Ուկրաինայի Հայոց Թեմի Առաջնորդ՝ Տ. Նաթան Եպս. Յովհաննիսեանը և Տ. Միքայէլ Ծ. Վրդ. Աջապահեանը:

5. Յունիսի 8-10-ի միջոցին Պաղտատի մէջ (Իրաք) տեղի ունեցաւ Իրաքի Եկեղեցիներու կողմէ հրաւիրուած քրիստոնէական խորհրդածողով մը, որուն մասնակցեցան շուրջ 20 երկիրներէ եկած ներկայացուցիչներ: Հայց. Առաքելական Եկեղեցին մասնակցեցաւ իր Մայր Աթոռի երկու ներկայացուցիչներով՝ յանձինս Եգիպտոսի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Զաւէն Արքեպս. Չիմշինեանի և Իրաքի Հայոց Թեմի Առաջնորդ Տ. Աւագ Արքեպս. Ասատուրեանի:

Ը

ՅԱՐԱԲԵՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹԵԱՆ ՀԵՏ

Մայր Աթոռոյս յարաբերութիւնները հայրենի պետութեան հետ ընթացան շատ սերտ եղանակով: Մենք անձամբ դեռ Գերմանիա կը գտնուէինք երբ փետրուար 3-ին նախագահական իր պաշտօնէն հրաժարեցաւ Մեծյ. Տիար Լեւոն Տէր Պետրոսեան: Ըստ Սահմանադրութեան՝ 40 օրերէ ետք տեղի ունեցաւ նոր նախագահի ընտրութիւնը ժողովրդավարական սկզբունքներու և ազատ պայմաններու տակ: Նախագահ ընտրուեցաւ օրուան վարչապետը՝ Մեծյ. Տիար Ռոպէրթ Քոչարեան: Մենք քաջակերողը եղանք օրինականութեան գործադրումին և խաղաղ պայմաններու տակ այս փոփոխութիւնը կատարուելու գաղափարին:

Անձամբ ներկայ եղանք նոր նախագահի երդման արարողութեան, ինչպէս վերև յիշեցինք: Յաջորդ օրը Սրբազան Հայրերու ընկերակցութեամբ

եամբ այցելեցինք մոր նախագահին և Մեր բարեմաղթանքները յայտնեցինք նախագահական պալատին մէջ:

Մեր հիւանդութեան շրջանին նախագահը և պետական այլ բարձրաստիճան անձնատրութիւններ իրենց բարեմաղթութեան խօսքերը ուղղեցին Մեզի հեռաձայնով և ոմանք մոյցիսկ՝ անձնական այցելութեամբ:

Մայիսի 28-ին, երբ հանդիսատրապէս տօնուեցաւ Հայաստանի առաջին Հանրապետութեան (1918-ի) ութսունամեակը, Մենք յատուկ կոմիտէ պատրաստեցինք որ հանդիսատրապէս կարդացուեցաւ տօնակատարութեան հանդիսութեան:

Ժամախակի հանդիպումներ ունեցանք Նորհրդարանի նախագահ Մեծյ. Խոսրով Յարութիւնեանի, Վարչապետ Արմէն Դարբինեանի, նախարարներու, այլ բարձրաստիճան պետական ղեմքերու հետ: Հանդիպում ունեցանք նաև մայրոք նախագահ Մեծյ. Լևոն Տէր Պետրոսեանի հետ:

Մեր յոյսն է, որ օրինական պայմաններու տակ և խաղաղօրէն կատարուած այս փոփոխութիւնը առիթ կ'ըլլայ մեր ժողովորդի միասնութեան զօրացման և՛ երկրի տնտեսական զարգացման ու բարոյական առաւել առողջացման:



ԱՅՅԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹԻՒՆՆԵՐ

Անցնող ութն ամիսներու ընթացքին ըլլա՛յ Մեր ներկայութեան ի Մայր Աթոռ, ըլլա՛յ Մեր բացակայութեան, եղան բազմաթիւ այցելութիւններ և ընդունելութիւններ: Այստեղ յիշատակելի կը գտնենք հետևեալները.-

1. Թումուարի 23-ին Ռուսական Դաշնութեան Դաշնային Նորհրդոյի նախագահ Եգոր Ստրոն և իր գլխաւորած պատուիրակութիւնը, ընկերակցութեամբ Հայաստանի Ազգային Ժողովի նախագահ Մեծյ. Բաբգէն Արարքեանի:

2. Փետրուարի 28-ին Միացեալ Նահանգներու պետդեսպարտամենտի ժողովրդավարութեան և մարդկային իրաւանց վարչութեան Սթիվըն Բօֆի, ԱՄՆ-ի դեսպան պրն. Փ. Թոմսընի հետ:

3. Մարտ 27-ին Եւրոպայի Ապահովութեան և համագործակցութեան կազմակերպութեան ժողովրդավարական հաստատութիւններու և Մարդու իրաւունքներու գրասենեակի պատուիրակութիւնը՝ գլխաւորութեամբ գրասենեակի վարիչ-տնօրէն Մերարտ Ստոլդմանի:

4. Հիմաստանի Գիտութիւններու Ակադեմիայի փոխ-նախագահը վեց գիտնականներէ բաղկացած պատուիրակութեամբ, և ընկերակցութեամբ Հայաստանի Գիտութիւններու Ազգային Ակադեմիայի նախագահ Ակադեմիկոս Ֆադէյ Սարգսեանի:

5. Ապրիլ 28-ին ԱՊՀ-ի Անվտանգութեան Մարմիններու ղեկավարները, ընկերակցութեամբ Հայաստանի Անվտանգութեան և ներքին գործերու նախարար՝ պրն. Սերժ Սարգսեանի:

6. Թումիսի 30-ին Ֆրանսայի Սենատի պատուիրակութիւնը:

7. Ռումանիոյ Հանրապետութեան նախագահ Մեծյ. Էմիլ Կոստանդին-նեսկուն, ընկերակցութեամբ Հայաստանի Հանրապետութեան Արտաքին գործոց նախարար պրն. Վարդան Օսկանեանի:

8. Յունիս 30-ին Արժանթինի նախագահ Քարլոս Մենեմ այցելեց Հայաստան: Մեր բացակայութեան չէր այցելած Մայր Աթոռ, բայց Մեր նախագահի կողմէ տրուած ընդունելութեան բարի գալստեան Մեր խօսքը փոխանցուեցաւ իրեն՝ դիւանապետ Ներսէս Արքեպս. Պոզապալեանի կողմէ:

9. Իսկ մեր հայրենի Հանրապետութեան Ազգային Ժողովի նորընտիր նախագահ Մեծյ. Խոսրով Յարութիւնեան (Փետրուար 7-ին), Հանրապետութեան վարչապետ և Ժամանակաւորապէս նախագահի պաշտօնը կատարող Մեծյ. Ռուպերթ Քոչարեան (11 Փետրուար), Ղարաբաղի Հանրապետութեան նախկին վարչապետ Մեծյ. Լեոնարդ Պետրոսեան (12 Փետրուար), և Հայաստանի նորընտիր վարչապետ Մեծյ. Արմէն Դարբինեան (11 Ապրիլ):

Բոլորն ալ հայրական սիրով ընդունուեցան Մեր կողմէ և սրտբաց խօսակցութիւններ տեղի ունեցան մեր Հայրենիքի ապահով և յառաջընթաց զարգացման համար:

Ժ

1700-ԱՄԵՍԿԻ ԱՌՆՉՈՒԱԾ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆ

Անցնող ութը ամիսները բեղուն եղան այն աշխատանքներով, որոնք կապուած են Հայց. Եկեղեցւոյ պաշտօնական հիմնադրութեան 1700-ամեակի համար ծրագրուած գործունէութեան:

Գործադիր Մարմնի վարիչ-քարտուղար Տ. Մեսրոպ Արքեպս. Աշճեան վերջնականօրէն թողոց իր Առաջնորդական պաշտօնը Միացեալ Նահանգներու մէջ և եկաւ հաստատուելու ի Մայր Աթոռ և այստեղէն ամբողջ ժամանակի և կարողութեան մատուցումով նուիրուելու 1700-ամեակի գործունէութեան: Մի քանի օրէն տեղի կ'ունենայ Գործադիր Մարմնի ժողովը այստեղ՝ Ս. Էջմիածնի մէջ: Այնտեղ վարիչ-Քարտուղարի կողմէ մանրամասն զեկույց կը տրուի անցեալ ժողովէն ասոյին կատարուած աշխատանքներու մասին, և անոյ կազմակերպական ձևի և գործնական հոսի մէջ կը մտնեն յառաջիկայի գործերը:

Այստեղ պարտք կը զգանք յիշատակել հետևեալ իրագործումները:

1. Երկրորդ տարին ըլլալով ուխտագնացութիւն կազմակերպուեցաւ անմիջական հսկողութեամբ Տ. Յովնան Արքեպս. Տէրտէրեանի: Ուխտաւորները Գանատայէն, Միացեալ Նահանգներէն, Լիբանանէն, Պարսկաստանէն եկած են այս Օգոստոս ամսին և այժմ կը հետևին ուխտաւորութեան համար այստեղ, Հայաստանի թեմերուն մէջ, պատրաստուած շրջագայութեանց ծրագրին: Երէկ, Կիրակի, Մենք զիրենք ընդունեցինք

վեճարանի ընդունելութեանց սրահին մէջ: Յատուկ, աւելի աշխույժ աշխատանք տարուելու է թեմերու կողմէ ուխտագնացութեանց զարգացման, ուխտատուներու թիւի աճման համար:

2. Հրատարակութեանց շարքին մէջ ուրախութեամբ կ'ողջունենք ի յոյս ընծայումը գումազարդ ընտիր տպագրութեամբ՝

ա) "Հայաստան Երկիր Ուխտավայր", Բեղիմակ՝ Հայկ Խաչատրեան, (176 էջ):

բ) "Հայաստան՝ ուղեցոյց ուխտատուների և զբոսաշրջիկների համար", Բեղիմակ՝ Կոստանդին Խոտրավերդեան և Կարէն Մաթևոսեան (246 էջ):

գ) Մեծադիր քարտէս-ուղեցոյց՝ գումատը վերարտադրութիւններով Հայաստանի պատմական, ճարտարապետական և մշակութային արժէք ունեցող եկեղեցիներու և վանքերու՝ հայերէն և անգլերէն լեզուներով:

դ) Բազմաթիւ սրբապատկերներ, յուշապատկերներ, զխաւորաբար Մայր Աթոռի արուեստի գործերու մեծադիր գումատը վերարտադրութիւններ, զանոց ժողովրդականացնելու և յատկապէս ընտանեկան յարկերու տակ տարածելու համար, փոխանակ օտար անպաճոյճ և երբեմն Հայ Եկեղեցւոյ և հայ ժողովուրդի ճաշակին անհաղորդ և անհաշտ նկարներու:

3. Յուցահանդէսներու մարզին մէջ անցնող Ապրիլին Աթենքի մէջ կազմակերպուեցաւ շքեղ ցուցահանդէս մը Մայր Աթոռի և "Մէկարոն" գեղարուեստական կեդրոնի միասնական նախաձեռնութեամբ, որուն մասնակցեցան նաև Երևանի Մատենադարանը և Պատմութեան թանգարանը: Մայր Աթոռէն 62 գեղարուեստական կտորներ ցուցադրուեցան: Յուցահանդէսի բացումին Մեր կողմէ ներկայ գտնուեցան Յունաստանի Առաջնորդ Տ. Ոսկան Արքեպս. Գալփաքեանը և Հարաւային Ռուսաստանի Առաջնորդ Տ. Եզնիկ Եպս. Պետրոսեանը: Աւելի քան 30 հազար այցելուներ ունեցաւ ցուցահանդէսը:

Այդ առիթով յոյս տեսաւ գեղատիպ գումազարդ հատոր մը (256 էջ) յունարէն և հայերէն լեզուներով:

4. Հիմ եկեղեցիներու վերանորոգութեան աշխատանքը կարևոր տեղ գրաւեց անցնող ութ ամիսներու գործունէութեան մէջ: Աւարտեցան Բետեւեպ եկեղեցիներու վերանորոգութիւնները.

ա) Ամաղուի Նորավանքը՝ Սիմեան Թեմին մէջ.

բ) Ս. Կարապետի և Ս. Առաքելոց եկեղեցիները՝ Սևանի կղզիին վրայ:

գ) Կարքիի եկեղեցին՝ Արագածոտնի Թեմին մէջ:

դ) Բիւրականի Ս. Յովհաննէս եկեղեցին:

Աշխատանքը կը շարունակուի՝

ա) Մուղնու Ս. Գեորգ եկեղեցիին և համալիրին

բ) Կեչառիսի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցիին

գ) Սանահինի վանքին և գաւիթին

դ) Սաղմոսավանքի

ե) Յովհաննապանքի

զ) Տաթևի վերամորթությունաց այնքան կարևոր և ամփիջական քննազատին մէջ:

Մօտ օրէն սկսելու է Հատիճայի եկեղեցւոյ նորոգութիւնը:

5. Երևանի "Ս. ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱԽՈՐԻՉ" անուան տակ կառուցուող Մայր եկեղեցւոյ շինարարական աշխատանքը: Թառով կը յայտնենք որ կառուցման ընթացքը դանդաղ է, գուտ թեքմիկ պատճառներով: Թառաջիկային Մեր Յանձնախումբին ուշադրութեան կեդրոնը պիտի դառնայ այս ամենակարևոր գործը՝ 1700-ամեակի Քնտ առնչուած: Տենդագին աշխատանքի կը կարօտի այս մեծագործ ձեռնարկը, որ մեծ բարիք պիտի դառնայ մեր նոր Հանրապետութեան ժողովուրդին և պատիւ պիտի բերէ մեր եկեղեցիին, պետութեան և ժողովուրդին, որպէս մեր քրիստոնէական հաւատքի նոր ու շքեղ արտայայտութիւն:

ԺԱ

ՇԽԱՐԱՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԷՈՒԹԻՒՆ

Երկու բաժնիներու տակ ուրուագծօրէն կը ներկայացնենք կատարուած աշխատանքները.

1. Մայր Աթոռի մէջ կատարուած շինութիւններ. անոնց մէջ ամենէն կարևորը անցնող ամփսներու ընթացքին եղաւ Գեորգեան Հոգևոր Շեմարանի առընթեր "ՎԱՀԱՆ ԵՒ ԱՆՈՅԾ ԸԱՄԼԵԱՆ" անուանով կառուցուող Ուսանողական Հանրակացարանը, որ արդէն հասեր է նրկրորդ յարկին: Մեր յոյսն է որ մինչև տարեվերջ կ'աւարտուի մաս երրորդ, և վերջին, յարկը: 120-130 ուսանողներու քնակութեան տարողութեամբ շէնք է կառուցուողը:

Նոյն բաժանմանքի տակ պէտք է յիշատակել վերամորթական աշխատանքը Մայր Աթոռի տարածքին վրայ գտնուող շէնքերուն, ինչպէս Երեմեան շէնքի, Վանատան, Վեհարանի ուսանողական մնջարաններու, Մայր Տաճարի: Ասոնց կողքին մաս Հայկաշէնի կաթողիկոսարանի, Ս. Հռիփսիմէի վանքի գրատան-սրահի յարդարման աշխատանքները, Գայեանէի, Շողակաթի մէջ որոշ նորոգութիւններ, և ամենէն կարևորը՝ Գեղարդի վանքի արմատական վերամորթութիւնները, այս վերջինը քարերարութեամբ Արծաթիճի ազգայիններէն Տէր և Տիկին Գրիգոր և Օֆելիա Դերձակեաններու:

2. Թեմերու մէջ կատարուած աշխատանքներ՝ Մայր Աթոռոյ օժանդակութեամբ կամ մասնակցութեամբ. -

ա) Այրարատեան Հայրապետական Թեմի մէջ Երևանի Ս. Յովհաննէս եկեղեցիին զանգակատան կառուցումը,

բ) Օիրակի Թեմի շրջանին մէջ Ազատան գիւղի Ս. Ստեփանոս եկեղեցիին արմատական վերամորթումն ու բարեզարդումը,

գ) Գուգարաց Թեմին մէջ կառուցումը Ս. Ներսէս Շնորհալի

եկեղեցիին (Իջևան), որում օծումը արդեն կատարուեցաւ Յուլիս 22-ին: Բարերարները եղան Տէր և Տիկին Գեորգ և Պերճոսի Ներսէսեաններ: Արագ թափով կը շարունակուի Սպիտակի Ս. Թարութիւն եկեղեցւոյ շինութիւնը: Աւարտեցաւ Հաղթատի կողքին գտնուող բնակարանային համալիրին հիմնական վերանորոգութիւնը:

դ) Սիւնեաց Թեմի սահմաններէն ներս սկսաւ վալքի Ս. Տրդատ անունով կնքուելիք եկեղեցւոյ կառուցումը, քարերարութեամբ Ամերիկահայ Տէր և Տիկին Քարլ (Գալուստ) և Էմմա Սողոյեաններու:

ե) Կոտայքի Թեմի մէջ կատարուեցաւ հիմնարկէք Չարեմցաւանի եկեղեցիին, քարերարութեամբ Գանատահայ քարեղարներ՝ Տէր և Տիկին Ժիրայր Տէրվիշեաններու: Մօտ ատենէն սկսելու է նաև Առաջնորդարանի շէնքին վերանորոգումը Ծաղկաձորի մէջ, որտեղ շէնքը կառավարութեան կողմէ փոխանցուած է Մայր Աթոռին, որպէս Թեմական Կեդրոն ծառայելու համար:

զ) Արցախի Թեմին մէջ տեղի ունեցան օծումները՝

- Լաչիմի մէջ Ս. Համբարձման նորաշէն եկեղեցիին, որում քարերարն է՝ տեղական իշխանութիւնը և ժողովուրդը:

- Եւրօպի Ս. Ամենափրկիչ Ռոչակատր եկեղեցիին որ արմատական վերանորոգութեան ենթարկուեցաւ անցնող երկու-երեք տարիներու ընթացքին:

- Մարտակերտի մէջ իր ամարտին կը հասնի նոր եկեղեցիի մը կառուցումը:

Այստեղ սրտի պարտք կը համարենք մեր սրտագին շնորհակալութիւնները յայտնել բոլոր անոնց, որոնց քարերարութիւններով և նուիրատուութիւններով է որ ի գլուխ հանուեցան, և կը շարունակուին, վերսնշուած շինարարական և վերակառուցման յատուկ աշխատանքները:

ԺԲ

ԸՆԿԵՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹԻՒՆՆԵՐ

Բացի կարիքաւոր անձերու և հաստատութիւններու տրուած փոքր օժանդակութիւններէն, անցնող Յունուարէն ասդին հետեւեալ տեսակի ծառայութիւններ է մատուցած Մայր Աթոռը իր ժողովուրդի ընկերային-տնտեսական կեանքի քարելաւման մպատակով, միշտ առաջնորդուելով ժողովուրդի պարգագոյն խաւերուն գործ ստեղծելու հնարաւորութիւններ ձեռք բերելու գաղափարով:

Ս. Էջմիածինը՝

1. "ԾէՆ" Միութեան կազմակերպական ջանքերով հաստատած է միրգ չորցնելու և մրգեղէնի անուշեղէն պատրաստելու համար Սիւնիքի 5 գիւղերուն մէջ գործարանային տեխնիկական դիրութիւններ:

2. Կազմակերպուած է դեղաբոյսերու պատրաստութեան միջոցներ Արմավիրի մարզին մէջ:

Այս երկու գործերու իրականացման համար Մայր Աթոռին նիւթապէս

գորավիզ կանգնեցաւ Անգլիոյ Քրիստոնէական Օգնութեան կազմակերպութիւնը (Christian Aid):

3. Կոյրերու Միութեան համար ստեղծած է յատուկ ծրագիր տեսնելու կարողութեանէն զրկուած մարդկանց՝ հայերէն և ռուսերէն բնագիրներ կարենալ կարդալու և գրելու համար: Այս գործին օժանդակողը եղաւ Տանիմարթական միջ-եկեղեցական օգնութեան կազմակերպութիւնը (Dan churchaid):

4. Երևանի Շենգաւիթ թաղամասին մէջ "Նուարդ" հասարակական կազմակերպութեան հետ կազմակերպուած է մանկական էսթետիկական դաստիարակութեան խմբակ՝ օժանդակութեամբ Ամերիկայի Միացեալ Նահանգներէն (UMCOR):

5. Ծերերու և կարիքաւորներու համար բարեգործական երկու ճաշարաններու օգտակար կրցանք հանդիսանալ Սիւմիքի Թեմին մէջ՝ Գեղամահայէն Novalis կաթոլիկեան միջ-օգնութեան կազմակերպութեան օժանդակութեան շնորհիւ:

6. Ամենէն կարևոր աշխատանքներէն մէկը ընկերային ժողովրդական ծառայութեան այս մարզէն ներս եղաւ փոքր, առօրին գործերու համար ընկերութեան ամենէն համեստ խաւերուն պատկանող աճներու և ընտանիքներու փոքր դրամազուլիսներու (500-էն մինչև 3000 տոլար) յատկացումը փոխառութեան սկզբունքով (loan projects), որպէսզի կարենան իրենց սեփական աշխատանքով իրենց ապրուստը ապահովել: Մեր երկրի առողջ տնտեսութեան բանալին գործի պայմաններու և միջոցներու ստեղծումն է:

Անցեալ շիջանին 25 ընտանիքներու կարողացել էինք օգնել: Անցնող 8 ամիսներու ընթացքին 66 նոր ընտանիքներու ևս կրցանք օգնել, տրամադրելով ընդամենը 90.000 տոլարի գումար: Նախորդ փոխառութեան ընդունողներէն շուրջ 15 աճներ արդէն իսկ վերադարձուցին իրենց ստացած գումարները փոքր տոկոսով միասին: Եւ պայմանաժամէն առաջ: Սա քաջալերական երևոյթ է գործի ստեղծման այս նպատակին:

Այս աշխատանքներուն օժանդակեցին հայ ազգայիններ այլազան երկիրներէ, 1000-էն մինչև 10.000 տոլարի գումարներ տրամադրելով, ինչպէս նաև կարգ մը միջ-եկեղեցական կազմակերպութիւններ:

Բոլորին ևս յայտնենք Մեր ջերմ շնորհակալութիւններն ու գնահատանքը:

ԺԳ

ՕՇԱԿԱՆԻ Ս. ՄԵՍՐՈՊ ՄԱՇՏՈՅ ԴՊՐԱՏՈՒՆ

Անցեալ տարւոյնէ առդին կանոնաւոր ընթացքով Ս. Մեսրոպ Մաշտոց անուամբ մկրտուած Դպրութեան Տունը իր գործունէութիւնը յառաջ տարաւ Վարիչ Տնօրէն Պրմ. Ալֆրեդ Շահնազարեանի գլխաւորութեամբ և Արագածոտնի Թեմի անմիջական հսկողութեան ներքև:

Պաշտօնէութեան թիւը այժմ կը հասնի 8-ի: Գրասենեակային աշխատանքի բոլոր դիւրութիւնները ստեղծուած են:

Արդեն իսկ ձեռք բերուած են 4000 հատոր հայագիտական գիրքեր հայերէն, ռուսերէն և այլ լեզուներով:

Գալուստ Կիլպէնկեան հիմնարկութեան կողմէ հովանաւորուած թանգարանային բաժինը ճոխացած է գեղարուեստական գործերով, յատկապէս քանդակներով և իւղաներկ պատկերներով: Այսպէս. այնտեղ են գետեղուած, արուեստագէտի իսկ մուիրատուութեամբ, քանդակները Ղ. Չուպարի - "Մ. Խորենացի", "Ա. Շիրակացի", "Թ. Ռոսլին" և "Կոմիտաս" քանդակները: Նաև մօտ ատենէն կը գետեղուի "Մաշտոց և Կորիւն" արձանախումբերը, ինչպէս մաս Լևոն Թոքմաճեանի "Վոսմշապուր, Սահակ և Մեսրոպ" զանգուածեղ արձանը:

Դպրատունը ընդունեց այցելութիւնը ՀՀ Վսեմ. Նախագահի՝ Ռոպէրթ Քոչարեանի և այլ պաշտօնական անձանց: Հիւրընկալեց "Մոմիկ" կազմակերպութեան գեղարուեստական ցուցահանդէսը: Այժմ կը պատրաստուի ընդունելու Հայց. Եկեղեցւոյ 1700-ամեակի առիթով Պետական Յանձնախումբի կողմէ "Հայաստան և Քրիստոնեայ Արևելքը" միջին շուրջ կազմակերպուած գիտաժողովին մասնակցող օտար և հայ հայագետները:

Ընորհակալութիւն բոլոր աջակցողներուն և մուիրատուներուն:



Տեղեկագրի աւարտին փառք և գոհութիւն կ'ընծայենք Բարձրեալմ Աստուծոյ, որ 8 ամիսներու գործունէութեան շրջան մը շնորհեց Մեզի և Մեր բոլոր գործակիցներուն:

Մեր սրտագգած շնորհակալութիւնները և գնահատանքը կը յայտնենք Մայր Աթոռի Միաբանութեանը, Թեմակալ Առաջնորդներուն և հոգևորականութեան և ժողովականներուն, Մայր Աթոռի պաշտօնէութեան և բոլոր հայ և օտար այն կազմակերպութիւններուն և անհատներուն որոնք իրենց կարևոր բաժինը ունեցան իրականացած աշխատանքին մէջ: Թող Աստուած բազմապատիկ վարձահատույց ըլլայ բոլորին:

Մայր Աթոռի առաքելութիւնը կը շարունակուի և օրէ օր աւելի լայն ծաւալ կը ստանայ: Երանի անունը որոնք մասնակից կը դառնան գործին: Ինչ որ Էական է՝ այդ գործն է: Խօսքը կը գնայ, բայց գործը կը մնայ...:

ԳԱՐԵԳԻՆ Ա

ԿԱԹՈՂԻԿՈՍ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

11 Սեպտեմբեր 1998

Ս. Էջմիածին